ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5323-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ-ԱՌԻՆՋԻ 2-ՐԴ Մ/Շ, Հ.2/3 ՇԵՆՔ Հ.45 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՍԻԼ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.04.2026թ. ի.ՎԴ/7527/05/23 վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 23.10.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, ինքնակամ կառույցների չափերի վերաբերյալ «Հայկ Ավագյան Ալեքսանի» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների բնութագիրը.

1. Երևան, Ավան, Ավան-Առինջի 2-րդ մ/շ, ի.2/3 շենք ի.45 հասցեում՝ ընդհանուր բաժնային սեփականություն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ի.02062016-01-0130 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր ի.2022AJVVCH) հանդիսացող հողամասում քաղաքացի Վասիլ Սամվելի Պարոնյանի կողմից ինքնակամ իրականացրած 103,05քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի /ձեղնահարկ/) ճանաչել օրինական:

2. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի ի.912-Ն որոշմամբ հաշվարկված 777203 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ